ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ N 12

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

---

Արագածի զանգված 18
Վաղարշապատ
Արմավիրի մարզ
հեռ: (0231)4-40-75

N: 262 1 IX 2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում առկա է, <<Մաթեմատիկա>> ( 22 դասաժամ), <<Աշխարհագրություն>> ( 4 դասաժամ) , դասվար ( 17 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղ:

Կից ներկայացնում ենք ուսուցչի թափուր տեղի համար տրված հայտարարությունը <<Կրթություն>> շաբաթաթերթում:

Առդիր՝ 1 էջ:

**Դպրոցի տնօրեն** **Ա.Բաբայան**

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան հ. 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), աշխարհագրության (4 դասաժամ), մաթեմատիկայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշա- կած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրա- քանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի, - մարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղե- կանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխա- նատու անձը փաստաթղթերի լնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ լնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31-ից մինչեւ սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շա- բաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրե- րից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 15- ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վա- ղարշապատի Զորավար Անդրանիկի անվան հ. 12 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Էջմիածին, Արագած զանգված 18: Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 85-31-10 հեռախոսահամարով: